

**ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ ԳՈՐԾՆՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԳԻՏԱՏԵԼՆԻԿԱԿԱՆ ԵՎ  
ՏԵԼՆՈՒՈԳԻԱԿԱՆ ՈՒՈՐՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՏԱԿԵՏԻՑ**

**ԱԶԱՏ ԴԱՎԹՅԱՆ**, տնտեսական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի Տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի գիտնական-վերլուծաբան, Քաղաքական գիտության Հայաստանի ասոցիացիայի անդամ

Ժամանակակից անվտանգային մարտահրավերներին դիմակայելու նպատակով էական նշանակություն ունի պետության ռազմատնտեսական կարողությունների զարգացումը: Ղա ենթադրում է ոչ միայն պետության սպառազինությունների, ռազմական տեխնիկայի և մոբիլիզացիոն կարողությունների անընդհատ կատարելագործում, այլ նաև ռազմական և քաղաքացիական հատվածների միջև ամուր փոխկապվածության և փոխլրացման ապահովում: Այս առումով առանցքային կարևորություն է ստանում ռազմական և քաղաքացիական հատվածների ընդհանուր տեխնիկատեխնոլոգիական բազայի ընդլայնման միջոցով ռազմատնտեսական ոլորտի զարգացումը: Սա, իր հերթին, ենթադրում է ռազմատնտեսական գերակայությունների և դրանց հասնելու ուղիների սահմանամեր պետություն-մասնավոր հատված գործընկերության արդյունավետ մեխանիզմների ներդրում: Պետություն-մասնավոր հատված գործընկերությունը ունակ է բարձրացնել պաշտպանական նախագծերի իրագործման արդյունավետությունը, կրճատել պետական բյուջեի վրա ճնշումները և նպաստել ռազմական ոլորտ լավագույն կառավարչական կադրերի, տեխնիկայի և տեխնոլոգիաների փոխանցմանը: Պետությունը դաշինքի մեջ մտնելով գործարարության հետ, որպես կանոն, ոչ միայն թեթևացնում է պետբյուջեի վրա ճնշումները, այլ նաև ստեղծում է ռազմարդյունաբերական նախագծերի կառավարման ավելի ձկուն և գործուն համակարգ, իսկ գործարարությունը ստանում է երաշխիքների և հնարավորությունների լայն շրջանակ:

Պետություն-մասնավոր հատված համագործակցության առանցքային գործոնը հանդիսանում է մի կողմից՝ գործարարության շահագրգռումը ներդնել սեփական ռեսուրսները հետազոտությունների և մշակումների իրականացման գործում, իսկ մյուս կողմից՝ պետական պատվիրատուների շահագրգռումը փնտրելու մասնավոր հատվածի հետ գործընկերության

ուղիներ: Գործընկերության արդյունավետությունը ապահովվում է գլխավորապես ռիսկերի համախառն կրճատմամբ:

Պետություն-մասնավոր հատված գործընկերության հայեցակարգը, որպես կանոն, ունի հետևյալ կառուցվածքային ալգորիթմը.

- Նախագծի մշակում, որի շրջանակներում մասնավոր հատվածը որոշում է ներդրման օբյեկտը, կառուցում և մասնակիորեն կառավարում է այն համաձայն պետության առաջադրանքների հետ,
- Պետության կողմից ներդրումների ֆինանսավորում, այդ թվում՝ ենթակառուցվածքների օգտագործման համար վճարման ձևով,
- Երկարաժամկետ պայմանագրի կնքում,
- Պայմանագրի ժամկետի լրանալուց հետո ներդրման օբյեկտի անցում մասնավոր կամ պետական սեփականության:

Նախագծային ֆինանսավորման միջազգային ասոցիացիան առանձնացնում է պետություն-մասնավոր հատված գործընկերության երեք տեսակ.

- պետական ձեռնարկություն փոքր, ինչպես նաև վերահսկիչ փաթեթի վաճառք մասնավոր հատվածին,
- համաձայնագիր, որը պարտավորեցնում է պետությանը երկարաժամկետ հիմքով մասնավոր գործընկերոջից գնել նրա կողմից առաջարկվող բարձր որակյալ ծառայություններ,
- գործընկերային համաձայնագիր, որով մասնավոր հատվածը զբաղվում է պետական ակտիվների առևտրայնացմամբ:

Ռազմական բարեփոխումների, կառուցվածքային վերակառուցման և պետության տնտեսության արդիականացման պայմաններում ՌԱՀ-ի առջև խնդիր է դրված ապահովել ռազմական և քաղաքացիական հատվածների միջև փոխգործակցության բարձր մակարդակ: Այս առումով, էական նշանակություն ունի ՌԱՀ-ի գիտատեխնոլոգիական զարգացման ծրագրանպատակային պլանավորման հիմքում սպառազինությունների և ռազմական տեխնիկայի այնպիսի օրինակների ստեղծումը, որոնք ռեսուրսների սահմանափակության պայմաններում համապատասխանում են նորարարական բանակի պահանջներին: Այդ նպատակով առանցքային նշանակություն է ստանում գիտատեխնիկական և տեխնոլոգիական ոլորտում պետություն-մասնավոր հատված գործընկերության արդյունավետ մեխանիզմների ներդրումը: Այս առումով, քաղաքացիական ոլորտից ռազմական ոլորտ (spin-in) և հակառակ ուղղությամբ (spin-off) տեխնոլոգիաների փոխանցումը հանդիսանում է պետության ռազմատնտեսական անվտանգության ապահովման կարևորագույն գործոններից մեկը: Օրինակ՝ զարգացած պետությունների փորձը ցույց է տալիս, որ պաշտպանական գիտական մշակումների և տեխնոլոգիաների մինչև 50-60%-ը ունեն կիրառություն և բարձր ներուժային արդյունավետություն գիտատար քաղաքացիական արտադրանքի և երկակի նախանշանակման արտադրանքի թողարկման գործում և բարձրացնում են երկրի մրցունակությունը միջազգային շուկաներում: Մյուս կողմից՝ գնումների քաղաքականությունը նպատակ ունի նպաստելու քաղաքացիական և պաշտպանական հատվածների միջև փոխազդեցության ուժեղացմանը, ինչը պետք է նպաստի ռազմական ոլորտում քաղաքացիական արտադրանքի կիրառման արդյունավետության բարձրացմանը<sup>1</sup>:

Պետք է նշել, որ առևտրային հետազոտությունների և մշակումների փոխանցումը քաղաքացիական ոլորտից ռազմական ոլորտ համաշխարհային միտում է և շարունակելու է ձևափոխել և ռազմական արդյունաբերությունը, և քաղաքացիական ոլորտները: Դրա հիմնական դրդապատճառն այն է, որ գնալով մեծանում է ժամանակակից պատերազմի (ոչ միայն ֆինանսատնտեսական, այլ նաև քաղաքական, հումանիտար) և ռազմական և ռազմատեխնիկական միջոցներով պատրաստման արժեքը: Հաջորդ սերնդի սպառազինությունների և ռազմական տեխնիկայի մշակումը այսօր 2-3 անգամ ավելի թանկ է

---

<sup>1</sup> Stu Burgess, K., Antill, Peter D., Emerging strategies in defense acquisitions and military procurement, Hershey, PA, Information science reference, The National Defense University, Library and Learning Center, 2017

նախորդ մշակումների համեմատ<sup>2</sup>: Այսպիսի պայմաններում միանգամայն տրամաբանական է ռազմական և քաղաքացիական հատվածների սերտ համագործակցության ընդլայնման անհրաժեշտությունը:

Կարելի է առանձնացնել ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայի պետություններում տեխնոլոգիաների փոխանցման համակարգի հիմնական բնութագրիչ գծերը.

- նորմատիվ իրավական բազայի առկայություն, որը ոչ միայն կարգավորում, այլ նաև օրենսդրորեն կազմակերպում է գիտելիքների և տեխնոլոգիաների փոխանցումը՝ սահմանելով դրա մեխանիզմները և խթանիչները,
- առկա նորարարությունների արդյունավետ ներդրման նպատակով պետական ձեռնարկությունների, տարբեր գերատեսչությունների և այլ կառույցների գործունեության խթանում,
- մասնագիտացված կազմակերպությունների ստեղծում, որոնք զբաղվում են տեխնոլոգիաների փոխանցմամբ և պետություն-մասնավոր հատված փոխազդեցության գործունեության դյուրինացմամբ,
- նորարարական ենթակառուցվածքների զարգացում, որոնց թվում է բաժնետիրական հասարակությունը, ակադեմիական ինստիտուտների և գիտական լաբորատորիաների, ինչպես նաև տեղեկատվական համակարգերի ձևավորումը: Ստեղծվում են նաև ընդհանուր տվյալների բազաներ և հատուկ հրատարակություններ, որոնք կանոնավոր կերպով հրապարակում են տնտեսության համար հետաքրքրություն ներկայացնող նորարարությունների վերաբերյալ տեղեկույթ<sup>3</sup>:

---

<sup>2</sup> Ств Панкова, Л. В., Казеннов, С. Ю. Приоритеты зарубежных НИОКР двойного назначения, Национальный исследовательский институт мировой экономики и международных отношений имени Е. М. Примакова Российской Академии Наук, 2016, [http://www.imemo.ru/files/File/ru/publ/2016/2016\\_039.pdf](http://www.imemo.ru/files/File/ru/publ/2016/2016_039.pdf)

<sup>3</sup> Ств Российский экономический университет имени Г. В. Плеханова, Проблемы и перспективы развития промышленности России, Сборник материалов Международной научно-практической конференции, 2017 <https://www.rea.ru/ru/org/cathedries/ekpromkaf/Documents/%D0%A1%D0%B1%D0%BE%D1%80%D0%BD%D0%B8%D0%BA%2070->

Ինչ վերաբերում է ռազմական արդյունաբերության գիտատեխնիկական և տեխնոլոգիական հենքին, ապա ներկայումս շատ պետություններում դիտվում է որակական նորացման հիման վրա ռազմական արդյունաբերության խորը բարեփոխում: Այս առումով, էական նշանակություն ունի պաշտպանական համալիրի կոնվերսիայի իրագործումը: Կոնվերսիայի գործընթացում կարևորվում է ռազմական ոլորտից քաղաքացիական ոլորտ և հակառակ ուղղությամբ երկակի նախանշանակման տեխնոլոգիաների փոխանցումը: Պետության կարգավորող և վերահսկող դերը այս գործընթացներում կայանում է երկակի նախանշանակման ԳՀՓԿԱ-երի ֆինանսավորման և ռազմաարդյունաբերության ոլորտում մրցակցության խթանման մեջ:

Օրինակ՝ Մեծ Բրիտանիայում կոնվերսիան դիտվում է որպես տնտեսության բոլոր հատվածների վերակառուցման և արդիականացման համազգային ծրագրի մի մաս, ներառյալ՝ պաշտպանական հատվածը՝ ուղղված ռազմական արդյունաբերության և աէրոտիեզերական արդյունաբերության մրցունակության բարձրացմանը<sup>4</sup>:

Պետություն-մասնավոր հատված գործընկերության հարուստ փորձ ունի Իսրայելը: Իսրայելում տեխնոլոգիական ինկուբատորների շրջանակում տաղանդավոր գիտնականները և ինժեներները աշխատում են այնպիսի միջավայրում, որտեղ նրանք հետազոտությունների պլանավորումից և մասնագիտական թիմի ընտրությունից մինչև ստացված արդյունքների ներդրումը և արտադրությունը ապահովված են որակյալ և ճիշտ ժամանակին աջակցությամբ: Յուրաքանչյուր գործարար-ինկուբատոր ղեկավարում է որակավորված և փորձառու տնօրեն: Նա համագործակցում է տեխնիկական կոմիտեի հետ, որի մեջ մտնում են տվյալ ոլորտին առնչվող գործարանների ղեկավարները, արդյունաբերության բարձր տեխնոլոգիական ոլորտների ձեռնարկությունների նոր մշակումների հեղինակավոր ներկայացուցիչները, համալսարանների և գիտահետազոտական ինստիտուտների պրոֆեսորները, ինչպես նաև հայտնի անձինք,

---

[%D0%BB%D0%B5%D1%82%D0%B8%D0%B5%20%D0%BA%D0%B0%D1%84%D0%B5%D0%B4%D1%80%D1%8B%20%D0%AD%D0%BA%D0%BE%D0%BD%D0%BE%D0%BC%D0%B8%D0%BA%D0%B8%20%D0%BF%D1%80%D0%BE%D0%BC%D1%8B%D1%88%D0%BB%D0%B5%D0%BD%D0%BD%D0%BE%D1%81%D1%82%D0%B8%202017.pdf](#)

<sup>4</sup> С. А. Лемешевский, Е В. Маскайкина, Реструктуризация оборонного сектора экономики: Опыт зарубежных стран и российская специфика. Финансовые проблемы функционирования ОПК РФ, 2007, [file:///C:/Users/Dell/Downloads/restrukturizatsiya-oboronnogo-sektora-ekonomiki-opyt-zarubezhnyh-stran-i-rossiyskaya-spetsifika-finansovye-problemy%20\(2\).pdf](file:///C:/Users/Dell/Downloads/restrukturizatsiya-oboronnogo-sektora-ekonomiki-opyt-zarubezhnyh-stran-i-rossiyskaya-spetsifika-finansovye-problemy%20(2).pdf)

ովքեր այսպես կամ այնպես կապված են արտադրության կոնկրետ ոլորտի և հասարակական կյանքի հետ: Բոլոր տեխնոլոգիական ինկուբատորները կազմակերպվում են այնպես, որպեսզի դրանցից յուրաքանչյուրը կարողանա ապահովել 10-15 նախագծերի միաժամանակյա իրագործում<sup>5</sup>:

Ներկայումս քաղաքացիական և ռազմական տեխնոլոգիաների միջև սահմանները գրեթե վերացել են: Երբեմն նույնիսկ դժվար է սահմանել թե որ ձեռնարկություններն են թողարկում ռազմական կամ պաշտպանական ապրանքներ, քանի որ սպառազինությունների և ռազմական տեխնիկայի բարդ համակարգերը հաճախակիորեն արտադրվում են մի քանի հարյուր ընկերությունների կողմից, որոնք աշխատում են տարբեր պետություններում: Ընդ որում՝ այդ ձեռնարկություններից շատերը իրականում դասական սահմանամաք զենք արտադրողներ չեն և ընդգրկված են քաղաքացիական հատվածում:

Միևնույն ժամանակ, ՌԱՀ-ի գիտատեխնիկական ներուժի ամրապնդման խնդիրը բարդանում է նրանով, որ մի կողմից՝ ազգային անվտանգության ապահովման նպատակով ռազմաարդյունաբերական ձեռնարկությունները պետք է ապահովեն սպառազինությունների և ռազմական տեխնիկայի մատակարարումները, իսկ մյուս կողմից՝ այդ ձեռնարկությունները շահույթ հետապնդող են և գործում են կոշտ մրցակցային միջավայրում: Այդ նպատակների համատեղումը ժամանակակից պայմաններում բավականին դժվար է:

Մյուս խնդիրը կայանում է նրանում, որ պետական պատվիրատուները հիմնականում չեն զբաղվում քաղաքացիական նախանշանակման արտադրանքի հետ կապված մշակումներով: Այդ իսկ պատճառով տեխնոլոգիաների փոխանցումը հաճախակիորեն չի կրում համակարգային բնույթ, ինչը զսպում է նորարարական զարգացումը:

Մյուս կողմից՝ թեև նորարարական զարգացման ապահովման գործում կարևորվում է գործարարության կարևորագույն դերը և ենթադրվում է ձեռնարկությունների և համալսարանների միջև սերտ համագործակցությունը, այնուամենայնիվ, կարճաժամկետ հատվածում թե՛ մրցակցությունը ստիպում է խոշոր ձեռնարկություններին աջակցելու գլխավորապես կիրառական հետազոտությունների մշակմանն ու իրագործմանը, քան հիմնարար հետազոտություններին: Արդյունքում՝ մասնավոր ձեռնարկությունները ավելի շատ ապավինում են համալսարանական հենքի վրա հետազոտություններին և արդյունաբերություն-համալսարան համագործակցությանը: Այնուամենայնիվ, պետական

---

<sup>5</sup> Ств С. Ефимушкин, Г. Сажаева, Инновационный путь развития экономики Израиля (мировой опыт), 2016 <https://creativeconomy.ru/lib/37094>

համալսարանական հետազոտողները անպայմանորեն կարող են շահագրգռված չլինեն աշխատելու այն խնդիրների վրա, որոնք կապված են միմիայն առևտրային կարիքների հետ<sup>6</sup>: Այս առումով, օրինակ՝ Գերմանիայի գիտահետազոտական համակարգը տարբերվում է համալսարանների հետազոտական ծրագրերի ֆինանսավորման գործում գործարարության բարձր ներգրավածությամբ, ինչը պայմանավորված է վերջիններիս գործնական բնույթի լայն որակական մշակումներ ստեղծելու կարողությամբ<sup>7</sup>:

Ճապոնիայում ձևավորվել է որակապես այլ, այսպես կոչված գիտահետազոտական համակարգի կորպորատիվ մոդելը: Նրա կենտրոնական օղակն է արդյունաբերական կորպորացիաների գիտահետազոտական բաժինները: Նորարարությունների ոլորտում պետական քաղաքականությունը նույնպես կողմնորոշված է առավելապես դեպի խոշոր գործարարությունների ներգրավման: Այդպիսի համակարգը նաև կողմնորոշված է դեպի օտարերկրյա նորարարությունների ակտիվ փոխառնության վրա, ինչը անպայմանորեն պետք է բերի ներքին նորարարական ներուժի ինտենսիվ մեծացման<sup>8</sup>:

Սկանդինավյան պետություններում ձևավորվել է գիտահետազոտական համակարգի այնպիսի մոդել, որին բնորոշ է ոլորտային և տարածաշրջանային նորարարական կլաստերներում ֆինանսական ռեսուրսների մոբիլիզացումը: Այս պարագայում կայուն գործընկերային հարաբերությունների և սերտ կոպերացիայի հիման վրա փոքր նորարարական ընկերությունները, խոշոր ձեռնարկությունները, համալսարանները և գիտահետազոտական ինստիտուտները իրականացնում են իրենց գործունեությունը: Ընդ որում՝ կայուն գործընկերային հարաբերությունները թույլ են տալիս փոքր նորարարական ընկերություններին ապահովել կապիտալիզացիայի և լիկվիդայնության բավարարման կարգով՝ փոխհատուցելով զարգացած ֆինանսական համակարգ ունեցող պետություններում ռիսկային ներդրումներ իրականացնող շուկայական ինստիտուտների բացակայությունը: Պետությունը նաև կարևոր դեր է խաղում նորարարական գործընթացի վաղ փուլերի ֆինանսավորման գործում՝ ներդրումները կենտրոնացնելով գործարարության

---

<sup>6</sup> Stu Robert D. Atkinson, Stephen J. Ezell, Innovation Economics, The National Defense University, Library & Learning Center, 2012

<sup>7</sup> Stu A. М. Ерошкин, М. В. Петров, Д. Е. Плисецкий, Финансирование инновационного развития: теория и практика, Федеральное государственное бюджетное учреждение науки Институт Европы Российской академии наук, 2012 <http://instituteofeurope.ru/images/monografii/Eroshkin-block.pdf>

<sup>8</sup> Տես նույն տեղում:

կողմից իրականացվող հետազոտությունների և մշակումների հեռանկարային ուղղություններում<sup>9</sup>:

Պետք է նշել, որ պետություն-մասնավոր հատված գործընկերությունը չափազանց կարևորվում է նաև գիտանորարարական ցիկլի փուլերի՝ «գաղափարի հայտնվում – հիմնարար հետազոտություններ – կիրառական հետազոտություններ – ԳՀՓԿԱ – փորձնական օրինակի ստեղծում – արդյունաբերական փորձարկում – արտադրությունում յուրացում – սերիական արտադրություն – առևտրային յուրացում – արտադրանքի գործնական թողարկում» իրականացման տեսանկյունից: Ընդ որում, այս շղթան պետք է լինի շատ հավասարակշռված. չի կարելի թերագնահատել կամ գերագնահատել այս կամ այն ուղղությունը, այլապես շղթան կարող է խախտվել: Միջազգային փորձը արդեն վաղուց մշակել է այս շղթայի բաղկացուցիչ մասերի միջև որոշակի հարաբերակցություններ: Մասնավորապես, որպեսզի իրականացվի մեկ ԳՀՓԿԱ, անհրաժեշտ է 10 կիրառական հետազոտություններ, իսկ 10 կիրառական հետազոտությունների համար՝ 50 հիմնարար հետազոտություններ: Ընդ որում՝ որքան բարդ է ստեղծվող արտադրանքը, այնքան բարձր է ռիսկը, հատկապես սկզբնական փուլում<sup>10</sup>:

Վերոնշյալ շղթայի պահպանումը չափազանց կարևորվում է ներկայիս նանոկենսատեղեկատվականկոգնիտիվ տեխնոլոգիաների մշակման և ներդրման գործում, քանի որ բացի բարդությունից դրանցից բխող սպառնալիքները նշանակալիորեն լայն են ներկայիս սպառազինությունների և ռազմական տեխնիկայի սպառնալիքներից: Հենց այդպիսի տեխնոլոգիաների մշակումն ու ներդրումն է ներկայումս պետություն-մասնավոր հատված գործընկերության կիզակետը:

Պետություն-մասնավոր հատված գործընկերության կիզակետում է նաև ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը: Ըստ ամերիկյան փորձագետների՝ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները թույլ են տալիս նշանակալիորեն բարձրացնել արտադրանքի որակը, 30—40%-ով կրճատել հետազոտությունների և մշակումների իրականացման ժամկետները, 30%-ով կրճատել արտադրության և ռազմական տեխնիկայի գնման ծախսերը, 22%-ով կրճատել պահեստային մասերի գնման ժամկետները,

<sup>9</sup> Տես նույն տեղում:

<sup>10</sup> Տես А. Е. Николаев, Развитие научно-технологического потенциала оборонно-промышленного комплекса России на основе реализации модели государственно-частного партнерства, 2013 <file:///C:/Users/Dell/Downloads/razvitie-nauchno-tehnologicheskogo-potentsiala-oboronno-promyshlennogo-kompleksa-rossii-na-osnove-realizatsii-modeli-gosudarstvenno.pdf>

ինչպես նաև 9 անգամ կրճատել ժամանակը, որը անհրաժեշտ է նախագծերի ճշգրտման և փոխադարձ կապի հաստատման համար: Այդպիսով, համախառն հաշվարկով նշանակալիորեն կրճատվում է արտադրանքի նոր օրինակների շուկա հանելու ժամանակը (60—70%-ով) և բարձրանում է արտադրության տնտեսական արդյունավետությունը<sup>11</sup>:

---

<sup>11</sup>Տես նույն տեղում: